

ՆԵՄԵՍԻՈՍԻ

ՅԱԳԱԳՍ ԲԵՆԻԹԵԱՆ ՄԱՐԿՈՅ

(ՏԷՍ Հոր. ԽԶ. էջ 318)

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Յաղագս անձին է լաւ, այսինքն՝ հոգւոյ մարդոյ:

Գրեթէ անմիաբան է հնոցն ամենեցունց՝ որ յաղագս անձինն է բան. քանզի Դիմոկրատէս եւ Եպիկուրոս, և ամենայն Ստոյկիկեանցն իմաստասիրացն ժողով՝ մարմին ասեն զանձն. և նոքանոյնք՝ որք մարմին ասեն զանձն՝ տարբերին յէութիւն նորա՝ քանզի Ստոյկիկեանքն հոգի ասեն զնա ջերմային և հրային. իսկ Էպիկուրոս՝ արիւն: Իպպոն իմաստասէր՝ Յուր, Դիմոկրատէս՝ հուր. քանզի գնդատեսակ ձեք անհաւտիցն բաղդատեալք¹ հուր և օդ. անձն կատարեն². իսկ Հերակլիտոս զամենեցունցն անձն՝ վերածխութիւն՝ ի խոնաւութիցն. իսկ զոր յանաւ սունան՝ յարտաբուստ և ի նոցայոցն վերածխութենէ համասեռ բնաւորիլ: Դարձեալ և անմարմին ասողացն զանձն՝ յուրմակի եղև անմիաբանութիւն. ոմանց գոյութիւն և անմահ ասացեալ զնա. իսկ ոմանց թէ և անմարմին, սակայն ոչ գոյութիւն և ոչ անմահ: Նախ թաղէս ոսոսց զանձն մշտաշարժ և ինքնաշարժ. իսկ Պիւթագորաս՝ թիւ՝ զանձն շարժող ըստ թիւոյ յօդաւորի³. իսկ Արիստոտէլէս՝ կա-

¹ Օրինակ մի բաղիսդեալք:

² Այս է. քանզի (ըստ Դիմոկրատեայ) հոգի (անձն՝ ըստ բնագրին) կողմեալ է ի բաղադրութենէ գնդատեսակ հիւլէից՝ յորց և օդ և հուր: Լծմն. Դիմոկրատէս ասէ. թէ գնդատեսակ են օդ և հուր՝ շուրջ զաղխարհաւս և անհատ ի միմեանց. հաւմեմատեալք՝ հոգի գոյացուցանեն: իսկ Հերակլիտոս՝ զամենեցուն անձն ի վերաժխութենէ երկրիս ասաց լինել, որ ի գոլորեաց լինի. իսկ անասնոց հոգի ի վերաժխութենէ ասաց, բայց այլ տեսակ ծխոյ՝ արտաբոյ մերոյս՝ ի հոմասեռս իւրեանց:

³ Ἀριθμὸν ἔαυτὸν κινῶντα, այսինքն է. թիւ՝ շարժող զինքն ինքիս: իսկ ըստ Լծմն. Պիւթագորաս շարժական թիւ ասաց զհոգի յօդաւոր. որպէս թիւ ի վերայ թիւոյ յօդեալ առաւելու: - Այսպէս խառնակ և պակասաւոր են ամենայն ձեռագիր օրինակք մեր, և ըստ նոցանէ՝ լուծմանցն պարապմունք, որք բազում այն է՝ զի տարաձայն յիւրեաց, տարաձայնին յոլով ուրեք և ի մտաց Նեմեսիոսի. որպէս և աստանօր ըստ բերման կամաց մեկնելով օտար իմացութեամբ զպակասաւոր գրութիւն նախկին ընդօրինակողին. զոր ըստ յունին ուղղելի է այսպէս. իսկ Պիւթագորաս, թիւ՝ զանձն շարժող. իսկ Պլատոն (Ժ. Գիրք Օրիկոնց) գոյութիւն՝ որ մտք իմանի և ինքեմք շարժի ըստ համաձայնութեան թիւոյ. իսկ Արիստոտէլէս, և այլն:

տարունութիւն¹ առաջին՝ մարմնոյ բնաւորականի, գործարանականի, զօրութեամբ կենդանութիւն ունողի. իսկ Գինարբոս՝ յօգաւորութիւն չորից տարեքս, այսինքն՝ խառնումն և համաձայնութիւն տարեքս. քանզի ոչ 'ի բարբառոյ զհաստեալն՝ այլ զոր 'ի մարմնի, շիւր մոյն և ցրտոյն, խոնաւոյ և ցամաքի յսփաւորն խառնումն և համաձայնութիւն կամի տանել Յայտ է թէ և 'ի սոցանէ՝ այլքն գոյոյ թիւն տանն զանձն. բայց Արիստոտելէս և Գինարբոս՝ անզոյ։ Եւս առ այսոքիկ՝ ոմանք մի գոլ ասացին զնոյնն ամենեցուն անձն, տրամատեալ յիւրաքանչիւրսն, և դարձեալ յինքն ժողովեալ. որպէս Մանիքեցիքն և այլք ոմանք։ իսկ ոմանք՝ բազումս և տարբերս ըստ տեսակի. ոմանք դարձեալ և մի և բազումս։

Հարկ է այժմ ամենայնիւ երկայնել զբանս՝ այսքանս կարծեաց ընդ զիմորառնելով։ Արդ՝ հասարակաց առ ամենեանն, որք ասնն զանձն մարմն՝ բաւական է առ 'ի յԱմիննայն² վարդապետէն Պրատունի³ և 'ի Նումենեոյ⁴ Պիթագորականէ ասացեալքն. և են այսոքիկ. Մարմինքն ընտանի բնութեամբն փոփոխելիք գոյով և ցրուելիք, և ամենեին յանբաւութիւն հատանելիք, ոչ ուրուք 'ի նոցանէ առանց փոխադրութեան մնացելոյ՝ կարօտ են շարունակողի և շաղկապողի, և որպէս 'ի միասին պնդողի, կրողի զնոսա. զոր ասեմք անձն։ Արդ՝ եթէ մարմին է անձն, որպէս և իցէ, թէ և 'իբրտգոյն, զինչ դարձեալ է որ շարունակէ զնա. քանզի ցուցաւ ամենայն մարմին կարօտ շարունակողի. և այսպէս յանբաւութիւն՝ մինչև հանդիպեացի անմարմնոյն։ իսկ եթէ ասիցեն, որպէս և Ստոյիկեանքն, անողական իմն գոլ շարժութիւն, յար 'ի մարմինս՝ ինեքս համանգամայնն արտաքս շարժեալ, և է ինչ որ արտաքս մեծութեանց և որակութեանց կատարողական գոլ, և է ինչ՝ որ 'ի ներքս կոյս միաւորութեան և էութեան. հարցանելի է ցնոստ, թէ վասն զի ամենայն շարժութիւն 'ի զօրութենէ իմեքէ, զինչ է զօրութիւնն այն և յումմէ գոյացեալ։ Արդ՝ եթէ զօրութիւնն նիւթ ինչ իցէ, նոքումք դարձեալ վարեցաւ բանիւք. իսկ եթէ ոչ 'իւրթ՝ այլ նիւթաւոր, (այլ է նիւթաւորն քան զնիւթն. քանզի հազարք նիւթոյ՝ տասնիւթաւոր), զինչ երեք արդեօք իցէ հաղորդ նիւթոյ. թերեւս նիւթ է նա, թէ աննիւթ։ Արդ՝ եթէ 'իւրթ, զիմք զնիւթաւոր և ոչ 'իւրթ. իսկ եթէ ոչ 'իւրթ, աննիւթ ուրեմն է. և եթէ աննիւթ՝ ոչ մարմին է, քանզի ամենայն մարմին 'իւրթ է։ իսկ եթէ ասիցեն, թէ մարմինք եւակի

¹ Թէ զինչ արդեօք իմացեալ լինի բառիւք՝ յայտնեցի ճոխագոյն յընթացս ճառին, յորում մեկնել առնուցաւ զասացեալսն յԱրիստոտելէ։

² Ամիննայն Սակիաս, իմաստաւէր նէպոլլտոնեան, որ հետամուտ գտաւ 'ի համաձայնութիւն ածել զվարդապետութիւնս Պրատունի և զԱրիստոտելոյ։

³ Իմա Պրոտինուսի (Πρωτίνου)։

⁴ Նումենիոս Ապամիացի, որ ընդգրկեաց զվարդապետութիւն աննիւթականութեան հոգոյ և զանմահութեան նորին։

տարորոշք են, և անձն ընդ բոլորն գտլով թափանցանց մարմին՝ եռա-
կի տարորոշ է, և վասն այսորիկ ամենայն իրօք և մարմին. ասեմք՝
եթէ ամենայն եռակի տարորոշ է, ոչ ոչ ամենայն հուսի տարորոշ
մարմին, քանզի անդի և սրակ, անմարմինք ըստ ինքնանց ըստ
պատահմանց՝ ի թանձրութիւն քանակտանն՝ այսպէս և անձն ըստ
ինքնան՝ անեռակի տարորոշ է. բայց ըստ պատահմանն յորում էն՝
յեռակի տարորոշի, գտլով ընդ նմին տեսակի և նա եռակի տարորոշ
էւս՝ ամենայն մարմին կամ արտաբուսա շարժի ձաւ՝ ի ներքուստ
այլ եթէ արտաբուսա՝ անանձն է. իսկ եթէ ի ներքուստ՝ անձնաւոր,
իսկ եթէ մարմին է անձն, եթէ՝ արտաբուսա շարժի՝ անանձն է, իսկ
եթէ ի ներքուստ՝ անձնաւոր, անտեղի է և անձնաւոր և անանձն
ասել զանձն, ոչ ուրեմն է մարմին անձն, Եւս, անձն եթէ կերակրի՝
յանմարմնացն կերակրի, քանզի ուսմունք կերակրեն զնա. և ոչինչ
մարմին յանմարմնոյ կերակրի. ոչ ուրեմն է մարմին անձն, իսկ
եթէ ոչ կերակրի, և ամենայն մարմին կենդանոյ՝ կերակրի. ոչ
ուրեմն է մարմին անձն՝ — Եւ այսորիկ հասարակացաւ ամենեւին որք
ասեն մարմին գոյ զանձն:

Եւ պատնձիւն՝ առ սրտ ասենն արիւն կամ շունչ գոյ զանձն, վասն
զի շնչոյ կամ արեան զտաւցելոյ՝ մեռանի կենդանիւն, ապա և զայն
է ասելի՝ զոր ինչ ոմանք՝ յորոց վարկանին գոյ ինչ գրեցինն ասելովք.
Ոչաւ ուրեմն յորժամ մասն ինչ հոսէ յարեանէ՝ մասն ինչ հոսէ յանձ-
նէ. քանզի ունայնաբանութիւն է այսպիսիս զի ի վերայ նմանամաս
նիցն՝ մնացիւալն մասննոյն է ամենին. յուր՝ և բազում և նուազն նոյն
է. նմանապէս և յորժաթն և ոսկին, և ամենայն որոց մասանքն ոչ տա-
րափոխին ի միմեանց ըստ էութեանն. այսպէս և մնացեալն տրիւն՝ որ
քան ինչ է՝ անձն է, եթէ անձն տրիւն է. Որդ զայս յաւէտ է ասելի.
Թէ այն է անձն՝ որոյ ի բաց բարձելոյ՝ մեռանի կենդանիւն, ապա ամենայն
իրօք և մոպա անձն, և մտղձք երկտըանչիւրք. քանզի որք ի սոցա-
նէ պակասի՝ վախճան ածէ կենացն Եւ եւ, և լեւորդն և ուղիղ գլխոյ և
սիրտ և ստամոքք և երկամուկն և ընդերք և այլ բազումք.
քանզի որք ուրեք ի սոցանէ՝ ի բաց բարձեցելոյ՝ ոչ մեռանի ի կենդա-
նին, իսկ ոչ ուղղք բազումք են անտրիւնք, բայց շնչաւորք՝ որպէս

1) Յօդանակ մեր ի բանիւրքիւն քանականոյ. ազգեցաւ ըստ յունին: Լիմն. Տե-
ղի և ձե, որ է եռակիւն կամ քառակիւն, ի միտք անմարմին է. իսկ ներքի պա-
տահեալ՝ երկի աչացա ի ներքին:

2) Ի յոյն բնագրին այս վերջին բան ի գիմաց Քոնենկրատոսայ աւանդի, յայսպէս.
Σενοκράτης οὕτω συνήεν. εἰ δὲ πῶς τρέφεται և այլն:

3) Այսպէս միմին և խառնակ յամենայն օրինակուն մեր. Յոյնն ունի. (ὁ δὲ εἶπε
ῥητέον, ἀπὲρ τῶν οὐρανῶν εἰναί τε γεγραφήκασι λήγοντες. այսինքն. Ոչ զայն ինչ
յառաջ բերել ընդդէմ, զոր ոմանք՝ իրեւ գեղեցիկ իմն ընծայութեան գիւտ ի մէջ
ածեն ասելով. և այլն:

սիպէքն և տեւթիէդէպքն և այլք այսպիսի փափկամորթքն, այսպէս և ամենայն խեցեմորթքն, որպէս կարկինուքն և աստակոտքն և գաղափաւորքն և նմանք սոցին¹։ Արդ, եթէ չնշաւորք են և անաւրիւնք, յայտ է ոչ արինն² անձն, իսկ առ որս ասենն ջուր գոլ զանձն՝ զի ջուր կենդանարար երևի ամենայնի, և առանց ջրոյ կեալ ոչ է կար, բազումք³ են որ ընդգիմանան. քանզի և ոչ առանց կերակրոյ կեալ կարէ անձն, ուրեմն⁴ և զկերակուրս է տեսլ ըստ նոցա։ Որ է և բազում ինչ 'ի կենդանեաց' որ ոչ ըմպեն, որպէս և զամանց արծուեաց սաթ. և կտքաւ կարէ կեալ առանց ըմպելոյ։ Եւ վասն էր յաւէտ ջուր է անձն⁵ և ոչ օգ. քանզի առանց ջրոյ է և տեսլ բայց առանց տաւրեառի օդոյս՝ և ոչ դոյզն ինչ։ Այլ և օգ չէ անձն. քանզի բազումք են կենդանիք առանց տաւրեառի օդոյս, որպէս մեղուք և պիծակք և մրջինք, և անարիւնք 'ի ջրայնոցն բազումք, և ամենայն որոց ոչ են թօքք. քանզի ոչինչ յոչունողացն թոքս՝ ապ և առնու զօդս, և ոչ ոք՝ յորոց ոչ տան և առնուն զօդս՝ ունին թոքս⁶։

Իսկ վասն զի 'ի կղէանթեայ 'ի Ստոյիկեանցն և Քաիւսպեայ՝ բերին բանք ինչ՝ ոչ զանց առնելիք, զինչի է և զսոցայան լուծմունն, որպէս լուծին որք 'ի Պղատանեանցն։ Կղէանթէս այսպիսի իմն շարամանէ մաածութիւնս. Ոչ միայն ըստ մարմնոյ լինիւք նմանք ծնողացն, այլ և ըստ անձին, ախարք, բարոյիք, տրամադրութեամբք. և մարմնոյ է՝ նմանութիւն և աննմանութիւն, և ոչ անմարմնոյ. մարմին ուրեմն է անձն։ Այլ նախ քան զամենայն ստացոյք. Յորոց մասնէ՝ որք ըստ բոլորումն՝ ոչ կողմին համանդամայն⁷։ Իսկ առ այսու և ոչ անմարմնոյ ասելն զնմանութիւն սուտ է⁸. քանզի առեմք զթիւս նմանս գոլ՝ որոց կողմունք համեմատք են, որպէս զվեցն, և զքսան և զչորոն. քանզի կողմունքն վեցին՝ երկուք և երեքն, իսկ քսան և չորիցն՝ չորքն և վեցն⁹. և համեմատութիւն ունի երկուքն

¹) Եղեն. 'Ως τὰ οὐράχρη καὶ μάλακία, ὅσον σιπίαι καὶ τευθιδες καὶ ὀσμήλοι καὶ ψαίτα τὰ ὀστρακοδερμα καὶ ἀπλόστραχα, ὡς οἱ κάραβοι καὶ καρῖνοι καὶ ἀστακοί.

²) Այսինքն՝ բազում իրք են։ — ³) Որինուկ մի՛ անձն ուրումն և զկերակուրս

⁴) Արդարև ասնաւոր, թաշուն և զեռուն կենդանեաց և եթ անփական են թոքք, այլ 'ի ձկունս և 'ի կակղամորթն գաղափոս թոքաց վարեն ականջք, իսկ 'ի միջատս և 'ի ստորին դասու կենդանին՝ չնշանթք. ուստի յայտ է զի պակասութիւն թոքաց չէ նշան անգոյութեան տուր և առի շնչոյ։

⁵) Այսինքն է, 'ի մասնաւորէ առ ընդհանուրն չէ մարթ երբեք ընծայութեան առնուլ հաւատարմ թմն. Մասնաւոր մի մարդ կոմ երկու և՛ լինին նմանք, ծնողաց մարմնով և ոգւոյ կրիւք, բայց բովանդակ մարդութիւնս ոչ լինի։

⁶) Թմն. Իսկ այն՝ որասեն թէ նմանութիւնն և ոչ անմարմնոյ՝ սուտ են։

⁷) Չոր ունէ աստանոր՝ մարթ է մեկին իմանալ 'ի հետեւալ կիտանիչ չարաւածս ձեռքդ. (6 :: և 24 :: :: :: :: ::), որոց համեմատութիւն կողմանցն՝ են որպէս 2 առ 4, և 3 առ 6, ըստ վերոյգրիւր բանից Նեմեսիտի։

առ. չորսն, և երեքն առ վեցն. քանզի կրկնապատիկ բանիւ տեսաւ. նի, զի չորքն՝ երկուցն կրկնապատիկ է և վեցն՝ երկիցն. և են անմարմինք թիւք: Եւ ձեռք ձեռացն նմանք են. զի սրբան ինչ զանկրիւնն հաւատար ունի, և ըստ հաւատարանկեանցն՝ զկողմունսն համեմատեալ. իսկ զձեռն՝ և նորա անմարմին խառովանին զոչ. Եւս, որպէս քանակի՝ իւրն է հաւատարն և անհաւատարն, այսպէս և որակի՝ նմանն և աննման. ուրեմն և անմարմին անմարմնայնման է: Եւս, ասէ (Կղէան, թէս), ոչինչ անմարմին՝ ախտակից լինի մարմնայ, և ոչ անմարմնայ՝ մարմին. բայց ախտակից լինի անձն մարմնայ՝ ի հիւանդանալ և ի հատանիլ, և մարմին՝ տնձին, քանզի յամաշէլ ուրուք շառագունի, և յերկնէն զեղնի. մարմին ուրեմն է անձն: Եւ է միւս ես սուտ իմն առացն. լոցն՝ ըստ առժան շարակացեալ, տանին՝ ոչ ինչ անմարմին՝ ախտակից լինի մարմնայ. քանզի զինչ է՝ եթէ միայն անձին առ է այս². որպէս թէ մինչ որ տարիցէ, ոչ ինչ՝ ի կենդանեաց զվերին կրպին շարժիցէ, իսկ կռուողիսան զվերին կրպին շարժէ, ոչ ուրեմն է կենդանի կռուողիցորս. քանզի սուտ է առաջարկութիւն. զի և աստանօր ըստ առժան՝ որ ասէն թէ ոչինչ ի կենդանեաց զվերին կրպին շարժէ. զի տհաւ և կռուողիկաւ և կենդանի է և զվերին կրպին շարժէ. ըստ նորին օրինակի և յորժամ՝ ստիցէ՝ թէ ոչինչ անմարմին՝ մարմնայ ախտակից լինի. քանզի տեսալ լինի խնդրելիք՝ բացառացութեամբ: իսկ եթէ որ զիցէ ճշմարիտ զոչ՝ զոչինչ անմարմին՝ մարմնայ ախտակից լինեւ, այլ ասացեալն ոչ է խոստովանելի՝ զի ախտակից լինի անձն ի հիւանդանալ և ի հատանել մարմնայն. քանզի երկբայի³ թէ մարմինն միայն է՝ որ հիւանդանայն, առեալ յանձնէ զզգայութիւն, իսկ ինքն մնայ անախտ, թէ և խօթակից լինի մարմնայն: Եւ կալու յաւէտ⁴ առ ի փառաւորագունիցն՝ նախկինն, և ոչ է պարտ յերկբայ ասացեւ լոցն՝ ժողովիլ խորհուրդ, այլ ի խոստովանեցելոցն: Զի ի սեփականալ թենէ ցուցանի և ոմանց անմարմնաց՝ ախտակից լինել մարմնայ. քանզի սրտկութիւնք անմարմինք գորով՝ յախտանալ մարմնայն՝ և նորա ախտակից լինին մարմնայն՝ յապականութեան և ի լինելալժեռան:

Իսկ քառսիսպարս ասէ. Մահ՝ և որոշումն անձին ի մարմնայ. և ոչինչ անմարմինն ի մարմնայ սրոշի, քանզի և ոչ հզօր ի մարմին տնմարմինն, իսկ անձն ձ հզօր և սրոշի ի մարմնայ. ոչ ուրեմն է անմարմին՝ անձն: Բայցայնէ մահու լինել որոշումն անձին ի մարմնայ՝ ճշմարիտ է, բայց ոչ հզօր անմարմնայ ի մարմին՝ սուտ է ումենն ին ասացեալն.

1) Թորինական մեր՝ այս և և որակի, և այլն. ուղղեցաւ ըստ յունկն:

2) Իմա՝ անձին կամ հոգւոյ սեփական իցէ այս:

3) Իմա՝ յերկբայութեան մնայ:

4) Ասիւնքն՝ հաւատարմագոյն վկայի հոգիակն: Բայնն ունի. Καὶ κρατεῖ μάλλον παρὰ τοῖς ἐνδοξαστοῖς τὸ πρότερον. այսիկքն է. Աւալինն (յերկուց կարծեացդ) ընտրեւ. լուգայն վկայի տա ականաւորան (իմաստասէրս):

բայց 'ի վերայ անձին ճշմարիտ է, իսկ է սուտ՝ վասն զի գիծ անմարմին գոյով՝ հպի 'ի մարմին և որոշի. նոյնպէս և սպիտակութիւն, իսկ 'ի վերայ անձին՝ ճշմարիտ, քանզի ոչ հպի 'ի մարմին՝ անձն. քանզի թէ հպի՝ յայտ է թէ սուրնթերկայ նորա. և եթէ այս է՝ ոչ բոլորին կայ աւրնթեր. քանզի անկոր է մարմինն բոլորին կալ աւրնթեր. և եթէ այսպէս ոչ է՝ բոլորն ոչ եղիցի տնձնաւոր կենդանին. որպէս զի թէ հպի՝ մարմին եղիցի անձն, բոլորն ոչ եղիցի տնձնաւոր կենդանին. իսկ եթէ բոլորն է անձնաւոր և ոչ հպի, և ոչ մարմին է անձն, բայց կենդանին բոլորն անձնաւոր է, ոչ ուրեմն հպի, և ոչ մարմին է, և որոշի՝ անմարմին գոյով: Եւ արդ՝ զի ոչ է անձն մարմին՝ յայտ է յասացիլոցս. իսկ զի և ոչ անգոյ է՝ զոգոյնհետայն է ասել:

Իսկ վասն զի և Դիմարբոս յօգումն¹ կոչեաց զանձն, և Սիմիաս ընդդէմարանհրով Սոկրատայ՝ յօգումն ասէր զոչ զանձն, ասելով թէ նման է անձն՝ յօգման աղետաց, իսկ մարմին՝ քնարի, արտադրելի է զլուծմունս այսորիկ՝ զորս 'ի գիրսն Պլատոնի կայ, Եւ է մի 'ի նախացուցելոցն 'ի նմա. քանզի նախացուցանի՝ եթէ ուսմունք վերստին յիշեցմունք են. Արդ՝ զայս առեալ որպէս խոստովանելի, կազմէ զբանսն այս. պէս. Եթէ ուսմունք վերստին յիշեցմունք են, էր անձն ուրեմն նախ քան 'ի մարդումն լինել. իսկ եթէ յօգումն է՝ նախկին ոչ է, այլ յետոյ եղև յօգեալ ընդ մարմնոյս. քանզի ամենայն շարադրութիւն ոչ այլ ազգ ունի, բայց միայն որպէս ունի զայն՝ որոց շարակային, քանզի կցորդութիւն իմն է շարադրելոցն. շարադրութիւն յօգումն² գոյով՝ և ոչ արգելու զոչ հաղորդել³ նմա նոցա՝ յորոց շարադրեցան, այլ հետեւել նոցա Արդ պատերազմի այժմ՝ յօգումն գոյն զանձն՝ ընդ ուսմանց վերստին յիշեցմունցն լինելոյն. իսկ եթէ վերստին յիշմանցն ճշմարիտ է, սուտ ուրեմն է անձին յօգումն գոյ. Եւս, անձն ներհաւան է մարմնոյ, և զիշխանական ունի բան՝ որպէս իշխելով նմա. իսկ յօգումն ոչ համարեալ նմա լինի իշխան և ոչ ներհաւան է. ոչ ուրեմն է անձն յօգումնութիւն: Եւս, յօգումն յաւէտ կամ նուազ է՝ 'ի թուլացուցանելն և 'ի պնդելն. ոչ բան է յօգումն⁴, քանզի անկար է բանի

¹ Յայնն ἀρμονίαν, ներդաշնակութիւն:

² Լծմն. Բօգումն ասի զաշնակումն ձայնի. որպէս աղեաց քնարի յօգմանս:

³ Երկու արհեստք՝ համարել: Ապէս խառնակ և անիմաստի անին զայս իմաստ բանից ամենայն ձեռագիր օրինակք մեր, զոր բառ յունին իմանարի է մեկին. « Բան զի ամենայն շարադրութիւն՝ ոչ այլով իւրք է շարադրեալ, բայց եթէ յորոց շարադրին. արդ զաշնակաւ որումն ձայնի՝ շարադրութիւն իմն է յառաջ եկեալ 'ի շարակայելոց մասանց, ուստի ոչ նախկին նոցուն համարելի է, այլ հետեւութիւն: Բայս արեմն է պատերազմող մտաց գոյ՝ ասել զհոգին յօգումն (ներդաշնակութիւն) և միանգամայն զուսմունս. վերստին յիշեցմունս խոստովանել. այլ զի ճշմարտիւ ուսմունք վերստին յիշեցմունք են, ապա սուտ է լինել՝ հոգոյն յօգումն խոստովանութիւն:

⁴ Յայնն ունի. Οὐ τῷ λόγῳ δὲ τῆς ἀρμονίας, այս է. Այլ ոչ ըստ բանի յօգման (Non

զյաւէտն և զնուազնունել, այլ յօգման. քանզի թէ խառնեալն սուր վանգ է և կամ ծանր և ապա թողացին՝ զբանն զնոյն ամբողջ պահեն 'ի մեծութեան վանկիցն, բայց փոփոխումն առնաւ յօգումն ¹, ըստ յօգելոյն յաւէտ կամ նուազ. ոչ ուրեմն է յօգումն՝ անձն, իւր, անձն առաւ քննութիւն և չարութիւն մակընդունի. իսկ յօգումն՝ յօգումն և ան յօգումն ոչ մակընդունի. ոչ ուրեմն է անձն՝ յօգումն, իւր, անձն մակընդունելով զներհական անպակաս 'ի մասնէ ² էութիւն է և ենթա կայ, իսկ յօգումն՝ որակութիւն և յենթակայումն. իսկ էութիւն այլ է քան զորակութիւն. անձն ուրեմն այլ է քան զյօգումն: Արդ՝ յօգման հաւատարմ գոյ անձին՝ ոչ ինչ է անտեղի, այլ ոչ առ այս՝ յօգումն. քանզի և ոչ վասն զի առաքինութեան հաղորդ է՝ առաքինութիւն է անձն:

Իսկ Գաղիաոս ճշգրտիւ ոչ ինչ ասէ, այլ և վկայէ մակացուցակա նաքն իւրովը բանիւ, եթէ ոչինչ զքաւաց ճամբարիւ յաղագս անձին ³, բայց նման է յորոց ասեն փորձել յաւէտ զխառնուած բնութեանն առեւ զանձն ⁴, քանզի այսմիկ՝ հետեւեալ բարոյիցն տարբերութեան: Ի Հիւպոկրատեայ կազմէ զբանն: Իսկ եթէ այսպէս՝ յայտ է թէ և մահճ կանայցու զնա գոյ վարկանի, բայց ոչ զամենայն՝ այլ զանբանն միայն անձն մարդոյ: Բայց վասն բանականին երկբայի՝ ասելով այսպէս ⁵, թէ

quidem ratione harmoniæ). — Թմն. Բան այժմ զերգն ասէ զերաժշտին:

1) Մթին են ասացեալքդ 'ի Նեմեսիոսէ, քանզի չիք ինչ հարկ փոփոխելոյ կամ աղաւաղելոյ յօգման (ներդաշնակութեանն) 'ի սրութենէ և 'ի ծանրութենէ վանկիցն (ձայնիցն), քանզի փոփոխութիւնք զներդաշնակաորումն միշտ 'ի ներդաշնակութեան պահեն, թէպէտ և տարազ եղանակացն այլայլեցին: Պրատոնի ասացեալ է միայն. 'Αρμονία μάλλον καὶ ἤττον ἐστίν· ἢ δὲ ψυχῇ οὐ μάλλον καὶ ἤττον ἐστί· որ է. Ներդաշնակութեան առաւելութիւն կամ նուազութիւն գոյ, իսկ հոգեւոյ չիք կտրի կամ սակաւ:

2) Թորինսկս պակասի մասին: — Թմն. Մասն մի անձն և մասն մի մարմինն. արդ մի մասն՝ որ է անձն՝ կարէ առանց մարմնոյն ընդունել զներհական, գառաքինութիւն և զչարութիւն. և է անձն էութիւն կատարելոյ, և առնաւ զառաքինութիւն իրեան վերայ իրեն յենթակայի:

3) Իմա ըստ յունին. Ալին անդեկագոյնն ասացեալ իրեանն զհոգեւոյ՝ Մտիցոյցա կոչրիւնք, որպէս ինձ երևի, առանձինն մտտեան լիւր իցէ անշուշտ Գաղիսեոսի:

4) Այսպէս յօրինակեն. յոյն բնագիրն ունի. 'Βοις δὲ, ἐξ ὧν λέγεται, δοκιμαζέιν μᾶλλον, τὸ κράτος εἶναι: τὴν ψυχῇ. այս է. Այլ յորոց տէն՝ երևի յաւէտ զխառնուած բնութեանն (temperament) հոգի առնել: Գուցէ հայ թարգմանութիւնն ընթեւնը իցէ. Բայց յայնմանէ՝ յորոց տէն՝ կարծի յաւէտ, և այլն: — Քանզի այսմիկ հետէ՝ ալ բարոյիցն տարբերութեան, իմա. Քանզի տարբերութիւն բարոյից՝ զհետ գայ 'ի զանազանութենէ խառնուածոյ բնութեան:

5) Աստ պակասեն՝ որպէս 'ի Թարգմանութեանս՝ նոյնպէս և 'ի յոյն բնագիրն՝

վասն զի ոչ է կար՝ մարմնոյն խառնուածի լինել անձն՝ յայտ յայսմա-
նէ է, ամենայն մարմին անձնաւորի անանձն՝ ՚ի չորից տաբերցս է խառ-
նեալ, քանզի օղոյտ խառնուած՝ զմարմինս գործէ. արդ եթէ մար-
մնոյ խառնուած է անձն, ոչ ինչ եղիցի անանձն: Եւ ժողովի բանս
այսպէս. Եթէ խառնուած մարմնոյ՝ անձն է, ամենայն մարմին խառ-
նուած ունի, ոպա ամենայն մարմին ունի անձն. իսկ եթէ ամենայն
մարմին անձն ունի, ոչ մի մարմին է անանձն, և ոչ քոր ուրեմն և ոչ
փայտ և ոչ երկաթ, և ոչ այլ ինչ եղիցի անանձն: իսկ եթէ ոչ ընդհա-
նոր զամենայն խառնուած մարմնոյ տսէ (Պաղիանոս) անձն լինել, այլ
զոյսպիսին ինչ, հարցանելի է. Ո՞ր խառնուած է՝ որ առնէ կենդանի
անձն և բան ունող. քանզի զոր և աստացէ խառնուած՝ այսպիսիս զը-
տանեմք և յանշունչսն. քանզի ինն՝ զգլով խառնուածոյն, (նոյնպէս
եցոյց՝ յորում՝ Յաղագս խառնուածոյս²⁾) ութ զփոտսխառնիցն և մի
գրարէխառն՝ ինն, և ի՞նչ ըստ բարեխառնին, տսէ, խառնեալ զմարդն,
բոյց ոչ զամենայն՝ այլ զմիջակին խառնուածոյ. իսկ ըստ այլոց վո-
տախառնիցն՝ զայլս կենդանիս ըստ տեսակի՝ հանդերձ յաւէտ և նը-
ւազ թուլութեամբ և սասակութեամբ: Գտտնին և յանշունչսն ին-
նուէքն խառնուածք հանդերձ յաւէտիւն և նուազիւ. նոյնպէս գար-
ձեալ և ՚ի Պարզան³⁾ եցոյց, Եւս, եթէ անձն խառնուած է, իսկ խառ-
նուածք բնութեան փոփոխին ըստ հասակին և ըստ ժամանակին, ա-
պա և անձն փոփոխի. իսկ եթէ փոփոխի՝ ոչ զինչ ունիմք անձն, այլ
ըստ խառնուածին երբեմն աւելծու և երբեմն ոչխարի և երբեմն զայ-

բանք Գաղիանոսի. այլ հոյ թարգմանիչն (Ստեփանոս Սիւնեցի) համաձայն ձե-
սագիր օրինակայ ինչ յառնականաց՝ զյաջորդութիւն բանիցն իբրև հատուած վը-
կայութեան ՚ի Գաղիանոսէ ՚ի մէջ ածեալ՝ ընդ նախնեթացիցն յօգեալ շաղկապէ.
այլ մտացեաց ոչ ստիպուց, սրպէս և իմաստք բանին պահանջեն մանաւանդ, ՚ի
հերքումն կարծեաց Գաղիանոս. Նեմեփասի թաին այնոքիկ, ընթեռնելով. Բայց
վասն բանականին երկրոյի՝ տեսլով այսպէս... Ս. Ու զի ոչ է կար՝ մարմնոյն խառ-
նուածի, և այլն: Ըստ այսմ՝ սնին և բազմաթիւ ընդօրինակութիւնք յառնականք:

1) Ի՞նչ: Վատախառն ոյս է. յարժամ հոյն աւելի ՚ի միւս մարմնոյն խառնուած՝
քան զայլ երկուն, զհուրն տսեմ և զլուրն և զօգն, վատեղև ոյն մարմնոյն խառնուա-
ծին. և յորժամ ՚ի միւս այլում մարմնոյն խառնուած՝ հոյն պակաս լինի քան զայս ե-
րկուն՝ եղև վատ. և է այլ երկու՝ հոյոյն, որ ՚ի միւսն աւելի եղև և ՚ի միւսումն պա-
կաս. և է երկու վատ՝ հոյոյն. այսպէս և ՚ի ջուրն և ՚ի հաւն՝ երկու վատ
լինի, յորժամ առաւել կամ պակաս լինի մին քան զայլ երկուն. և այսպէս լինի ութ
վատախառն ՚ի կազմած ուս՝ և իցէ, Թէ՛ մարդոյ, Թէ՛ անասնոյ, Թէ՛ փայտի, Թէ՛
քորի. և յորժամ շրջն հաւասար լինին ՚ի խառնուած բնութեան՝ ոյն է բարի և
ըստ խառնուած. և յորժամ զուր վատն համարին և զմի զայս բարի՝ լինի ինն. և այս
է ինն խառնուածն:

²⁾ Ս. Ու ՚ի ՚ի զիրան՝ որ Յաղագս խառնուածոյ (ἐν τῷ περὶ κράσεως).

³⁾ Իմա զգիրս՝ որ զՊարզից (ἐν τοῖς ἀπλοῖς).

լոյ ուրուք, որ է անտեղի: Եւս, խառնուած բնութեան՝ ոչ ներհակալի
ցանկութեանց մարմնայն, այլ և գործակից լինի, քանզի նա է՝ որ շուր-
ժէն, իսկ անձն ներհակալի. ոչ ուրեմն խառնուած է անձն: Եւս, եթէ
խառնուած է անձն, իսկ խառնուած՝ որակութիւն, և որակութիւնն՝
և լինի և բացալինի՝ առանց ենթալկային ապականութեան, և ան-
ձըն ուրեմն որդեացի առանց ենթակային ապականութեան. բայց
այս ոչ է ճշմարիտ. ոչ ուրեմն է խառնուած և ոչ որակութիւն
անձն: Քանզի ոչ ուրեք զմիւս հակակայինքն բնութապէս առ-
լինել առաջին կենդանւոյն¹, որպէս հրոյ է ջեռուցանեն. քանզի
անփոխադրելի է այս. բայց խառնուածն երկի փոխադրեալ, յա-
ւէտ Վի ինքեանք են՝ որ ՚ի ձեռն բշխականի արուեստին զխառ-
նուածան փոխադրեն: Եւս, ամենայն մարմնոյ որակութիւնք զգալիք
են, բայց անձն ոչ զգալի, ոյլ իմացական. ոչ ուրեմն է որակութիւն
՚ի մարմնի² անձն: Եւս, մարմնոյ և հոգւոյ³ (յորադրութեամբ իսկ
մարմնոյ և ջրաց և այլոց) բարեխառնութիւն՝ զօրութիւն է. և ջերմոյ
և ցրտոյ և ցամաքի և խոնուի բարեխառնութիւն՝ առողջութիւն է. իսկ
բարեչափութիւն անգամոց՝ հանգերձ վայելուչ գունով գեղեցկու-
թիւն առնէ մարմնոյ: Արդ՝ եթէ յօգումն առողջութեանն և զօրու-
թեանն և գեղեցկութեանն՝ անձն է, հարկ էր մարդոյ որքան կենդանի
էր՝ ոչ հիւանդանալ և ոչ տկարանալ և ոչ ազեղ լինել. բայց պա-
տահի յոլովակի ոչ զմի միայն, այլ և զերեսինս զւրա բարեխառնու-
թիւնս կորուսանել և կենդանի գոլ մարդոյն. քանզի հանդիպի
նմա համոնդամոյն և տգեղ գոլ և տկարանալ և հիւանդանալ. ոչ
ուրեմն է բարեխառնութիւն մարմնոյն՝ անձն և Արդ, զիւրից բնու-
ւորական իմն չարութիւնք և առաքինութիւնք հետևին մարդկան.
այս ճշմարտապէս ՚ի մարմնոյն խառնուածոյ լինի. քանզի որպէս բնու-
թեամբ առողջ և հիւանդասք են ՚ի խառնուածէն, այսպէս և ոմոնք
բնութեամբ գառնամազձեռք և բարկայտք են, այլք վախոտք,
այլք ՚ի վայր բերեալք. այլք է երբեք զի բառն հարեալ ունին և յաղթ-
կու լինին. յայտ է՝ զխառնուածէն բառն հարեալ ունին. այլ է
որ ունին և այլ է զոր ունին. այլ ուրեմն է խառնուածն և այլ

¹ Յոյն բնագիրն ունի. Οὐ γὰρ ὁππῶς τὸ εἶταρον τῶν ἀντικείμενων φυσικῶν ποσείναι
φύσους τῶ ζώου այս է. Ապաքէն ոչ զայնպիսեաց ինչ որակութեանց (qualité) ասա-
ցի, որք բնաւորականք են կենդանւոյն. որպէս ջերմութիւն բոակից գոտնի հրոյ.
(զի ոչսգունակ որա՛յութեանց չիք փոփոխել, մինչդեռ խառնուածոյ հնարաւոր է.
նա՛զի և ՚ի բշխաց իսկ են՝ որք ՚ի ձեռն արուեստին զխառնուածան փոփոխեն):

² Յօրինակն մեր որակութիւն ամենալին. ուղղեց՝ բառ յունին (οὐκ ἄρα ποί-
της σωματός· ἔστιν ἢ ψυχῇ).

³ Յոյնն, τὰ πνεύματα καὶ πνεύματος, այսինքն՝ արևան և հոգւոյ: — Գիտելի է զի
թարգմանիչս զանգաւնէ ՚ի հոյսումս զանիճի (ψυχῇ) ՚ի հոգւոյ (πνεύμα).

⁴ Ἄλλο δὲ ἐστὶ τὸ κρατοῦν καὶ ἄλλο τὸ κρατοῦμενον.

տնձն : քանզի դործարան գորով մարմին տնձին, թէ պատեհապէս կազմեցի՝ գործակից լինի տնձին, իսկ եթէ անպատեհաբար՝ խափա, նիւշ և յոյնժամ պէտք են տնձինն իրաց ինչ՝ որք մարտնչին ընդ անպատեհութեան գործարանին : Եւ եթէ պէ՛տք զգատատաացի, ալլ ընդ նմա խտորեցի : որպէս՝ զք երաժիշտ զհետ երթիցէ քնարին թիւրութեան, թէ ոչ նախ քնա բարիւք կազմեցէ : վասն որոյ և պիտոյ է տնձին հպտաակ լինել՝ մարմնոյ, զի կազմեցէ զնա դործարան իւր ըստ պատեհութեան. և զայս տունն ՚ի ձեռն բանի և սովորականաց հրահանգից, որպէս յօդամք՝ զամանա թուրցոցաւ ներ և զամանա պնդել, զի պատշաճ զնա իւր կազմեցէ՝ և վարեցի պատեհ գործարանաւ. եթէ ոչ՝ ինքն ընդ նմին թիւրեցի : քանզի պտտահի և այս :

Իսկ Արիստոտելէ պահձն՝ կատարունութիւն ասելով՝ ալ ինչ պնձ կամ բերի յայնցտնէ՝ որք որակութիւնս ասին զնա : Բայց յայտնեալ ցոյք նախ թէ զինչ կոչէ զկատարունութիւնն : Զնութիւն՝ եռակի ասէ 2. է ինչ՝ զոր որպէս նիւթ ենթակոյ, որ ըստ ինքեան ոչինչ է, բայց ունի զօրութիւն առ լինելութիւն. իսկ զմիւսն՝ կերպարան և տեսակ՝ ըստ որում տեսակադործի նիւթն. և երրորդ՝ որ հանդերձ երկաքանչիւրիւքն՝ ՚ի նիւթոյն և ՚ի տեսակէն՝ եղեան, որ է ապա անձնաւոր : Արդ, նիւթն՝ զօրութիւն, իսկ տեսակն՝ կատարունութիւն. և այս՝ երկու ՚ի, ոմն՝ որպէս մակոցութիւն, ոմն՝ որպէս տեսաւնել ըստ մակացութեանն, այսինքն՝ ոմն որպէս տրամադրութիւն, և ոմն որպէս ներգործութիւն մակոցութեան. զի ՚ի գօրոյն տնձին և քուն և տրթնութիւն է 3. իսկ համեմատ տրթնութեանն՝ տեսանեւել և դարձելն, իսկ քնոյն՝ տեսանելն և ոչ գործելն : Եւ նախկին է միւր կացութիւն քան զներգործութիւն. վասն որոյ առաջին կատարունութիւն կոչէ (Արիստոտել) զտեսակն, և երկրորդ զներգործութիւնն : Արպէս, ակն յենթակայէ և ՚ի տեսակէ. և է ենթակայն ՚ի նմա՝ ընկալեալ զտեսութիւն՝ նիւթականն, և կոչի և նա համանունակի՝ ակն. իսկ տեսակն և կատարունութիւն առաջին՝ ականն՝ նպնէ 4. երեսը՝ որ կարօյն է զտեսանելն առ նմա. իսկ երկրորդն կատարունութիւն է

1) Ըստ յունական սոց (διὸ καὶ χρὴ αὐτῇ ψυχῇ τῆς ἐπιμελείας τοῦ σώματος), երէ, գորջ լինել, ոչ ունել որպա է՝ հագւոյ զի մարմինն իցէ ինքեան գործարան պատշաճաւոր :

2) Յորպէս Հոգւոյ, Գիրք Բ. Գլ. Խուղին :

3) Պատշաճաւոր կամ խառնակութիւն առ օրինակք մեր : Ըստ յոյն բնագրին իմաստ բունին պարտի լինել : Արդիսի իմն ցուցանէ անձն զերկոյսին զայստօրի (գործամա, գրութիւնն և զներգործութիւնն մակոցութեան) յորժամ ՚ի քուն գտանիցի և կամ յարթութեան, — Ժմն. Որինակաւ ցուցանէ թէ անձն գոյ ՚ի մարդն ՚ի քունն և յարթնութիւնն :

4) Յոյնն ունի. Նոյն ինքն տեսութիւնն (αὐτῇ ἡ ὁψις).

տական՝ ներգործութիւնն՝ ըստ որում՝ տեսանէն, Արդ՝ որպէս արդի ծընեալ էորիւն չան, և ոչ մի ինչ ունի կատարունութիւն, բայց զօրութիւն ունի ընդունելոյ զկատարունութիւն, այսպէս պարտ է առնուլ և զան ձիւնն՝ Քանզի որպէս անդ՝ ծնեալ երեսք՝ կատարէ զտէն, այսպէս առաանոր ծնեալ տնձն՝ ի մարմնի՝ կատարէ զկենդանին. քանզի ոչ առանց մարմնոյ զոլ երեսք զանձն, և ոչ մարմին անանձն. քոնզի մարմին ոչ է, բայց ի մարմնոյ է. և վասն այսորիկ ի մարմնի է, և ի մարմնի այսպիսում. ինքն ըստ ինքեան ոչ գոյ:

Այլ նախ զկրօականն մասն անձին՝ տնձն կոչէ (Արիտատեւ), զատունելով ի նմոնէ զբանականն. և պարտ էր զամենայն ունիւր զան ծընեալորոյ և ոչ ի մասնէ, և զայս՝ տկարագոյնին, վասն ամենայնին բացասելու Եւ ապա մարմին, ասէ՝ զօրութեամբ զկեալն ունի և՛ հախ քան զիկնել տնձնն. քանզի ասէ՝ եթէ մարմին զօրութեամբ կեանաւա՛ն ի. յինքնուն՝ Պարտ է՝ որ զօրութեամբ կեանաւա՛ն, նախ ներգործութեամբ զոլ մարմին. քանզի ոչ կարէ ներգործութեամբ գոլ մարմին՝ նախ քան ընդունել զտեսակն. զի նիւթ է անարար և ոչ մարմին. զի անկար է ոչ գոյին ներգործութեամբ, զօրութիւն ունել առ ի նմանէն ինչ ինկելոյ: Իսկ եթէ մարմին զօրութեամբ է, զիարդ՝ զօրութեամբ մարմին՝ զօրութեամբ կեանաւ ունել ի յինքեան կարէ: Իսկ այլազգ, ի վերայ՝ այլոյն է կար ունել ինչ և ոչ վարիլ նովաւ, որպէս՝ երեսն տնելով՝ ոչ վարիլ նովաւ. բայց ի վերայ տնձն անկար է, քանզի ոչ՝ որ ի քունն է՝ առանց տնձնականի զօրութեան է, քոնզի և կերակրի և աճէ և յածի և յանչ առնու, որ և մանաւանդ է նշանակ կեղոյն Արդ՝ յայսմանէ է յայսնի եթէ զօրութեամբ կեան ոչ է կար առլինել ումեք, այլ ամենայն իրզք ներգործութեամբ բլն. քանզի նախ որ անասկագործէ զանձն՝ ոչ ինչ է այլ քոն զկեաւ. Եւս. քանզի անձին տնկակոյ եղին կեանք, բայց մարմնոյ ըստ հաղորդութեան. և որ ոք ասիցէ զաղութիւն համեմատ զոլ կենաց, ոչ զան ձին կեանա տսիցէ, այլ զմարմնոյ: Եւ իմաստասիրի այսպէս՝ քանզի մարմնական էութիւն՝ պակաս ի մասնէ՝ և ներհակացն է ընդաւնական. Իսկ որ ըստ տեսակին և ոչ բնաւ. քանզի եթէ որ ըստ տեսակին տարբերութիւն փոխադրեացի՝ փոխադրի և կենդանին. որպէս զի ոչ որ ըստ տեսակի էութիւն՝ է ներհակացն ընդաւնական, այլ որ ըստ

1) Իմա երևոյր, տեսութիւն, որպէս ի վերոյ:

2) Իմա երևոյր, տեսողութիւն կամ գործարան տեսանիւոյ (ὁφθαλμικόν).

3) Յոյն բնագրին առի Kai οὕτω σοφίζεσθαι, զոր թարգմանին այլով իմաստիւք առնուլ կցադ յետագոյնցն ընթեանու. այլք դնեն համեմայն յոյն ձեռագիր օրինակաց՝ կցորդ ընդ նախընթացին, որով և ընթեանաւ. Արդ ք ասիցէ զաղութիւն համեմատ զ ոլ կենաց, ոչ զանձին կեանա տսիցէ, այլ զմարմնոյ, և այսպէս ասերիսի, զի σοφίζεσθαι առի զնշանակութիւն և իմաստասիրիւոյ և վրիպիւոյ:

4) Լիմն. Այսիքն՝ առանց հոգոյ, զի միմեանց մասունք են հոգին և մարմինն:

ենթակային, այսինքն՝ մարմնականն ու յիշ կարէ այժմ՝ ունենւն և ոչ բոստ միայ յեղանակի՝ կատարունութիւն մարմնայ զօլ, այլ էութիւն ինքնակատար և տնմարմին, քանզի պակաս 'ի մասնէ ընդունի զհերհակոն՝ զչարսութիւն և զառաքինութիւն, զոր ոչ կարէ ընդգունիլ տեսակն:

Եւ ապա ասէ (Արիստոտէլ) կատարունութիւն գոլով անձն՝ տն, շարժ գոլ բոստ ինքեան, և շարժի բոստ պատահման, և ոչինչ անվայելուչ՝ անշարժ գոլով շարժել զմեզ. քանզի և գեղեցկութիւն անշարժ գոլով՝ շարժէ զմեզ. այլ թէ և այս անշարժ գոլով շարժէ. այլ զբնութիւն ունելով շարժիչ՝ շարժէ, և ոչ զանշարժութիւն¹. Արդ՝ թէ և մարմին բոստ ինքեան շարժութիւն ունէր, ոչ ինչ էր անտեղի նմա՝ շարժիլ յանշարժէն. բայց այժմ՝ անկորս է անշարժին՝ յանշարժէն շարժիլ. Արդ՝ ուստի է մարմնայ շարժիլն, եթէ ոչ յանձնէ. քանզի ոչ ինքնուշարժ է մարմին. առաջին լինելութիւն շարժութիւն այժմ՝ կամելով ցոյցանել, ոչ առաջին՝ այլ երկրորդ եցոյց². քանզի թէ զանշարժն շարժէր՝ առաջին շարժութիւն աւնէր, իսկ եթէ զշարժուն ինքեամբ, և այժմ՝ այլազգ շարժէ, երկրորդ. շարժութեան լինելութիւն պատմէ:

Արդ՝ ուստի է առաջին շարժութիւն լինելութեան մարմնայ. քանզի ասելն՝ բոստ ինքեան շարժիլ տարերցս, ոմանք թիկթե. գոլով բոստ բնութեան և ոմանք ծանունք՝ սուտ է. քանզի թէ թեթևութիւն և ծանրութիւն շարժութիւն էր՝ ոչ երբեք դադարեալ կայր հաստատուն թեթևութիւն և ծանրութիւն. բայց կայ յիրուժ հաստեալ տեղի. ոչ արեմն է թեթևութիւն և ծանրութիւն՝ պատճառ առաջին շարժութեան, այլ որակութիւնք տարերցս. իսկ թէ և այժմ տոցի, զհարդ զմտաւ ածելն, խորհեն³ և զտարիլ, կարէ թեթևութեան և ծանրութեան գործ լինել. և եթէ ոչ այսոցիկ, (գործ լինել կարենաւ, պար) և ոչ տարերցս. իսկ թէ և ոչ տարերցս՝ և ոչ մարմնայ. Եւս, եթէ բոստ պատահման շարժի անձն, իսկ մարմին բոստ ինքեան, և առանձին՝ մարմին յինքինէ շարժիցի, և իթէ՝ այս կենդանի եղիցի և ուսանց անձին. բայց անտեղիք են այսքիկ. և անտեղի սրբմն և որ 'ի սկզբունէն. Այլ և ոչ ասել՝ թէ ամենայն սր բնութեամբ շարժուն է՝ և բունի շարժի, և ամենայն սր բունի շարժի՝ և բնութեամբ շարժուն է՝ է ճշմարիտ. քանզի աշխարհ բնութեամբ շարժուն՝ բռնութեամբ ոչ շարժի. Այլ ոչ սր բոստ բնութեան շարժին՝ նոյն բոստ բնութեան դադարէ. քանզի և աշխարհ և արեգակն և լուսին՝ բոստ բնութեան շարժունք, բոստ բնութեան դադարիլ ոչ կարեն. բոստ նմին

¹ Այսինքն է, թէպէտ և ինքն գեղեցկութիւնն չգպայինչ յօգուտն (շարժումն), այլ տայ զգալ տյնմ միայն՝ որ 'ի բնէն զգայութեան է ընդունակ, և ոչ զանզգայն:

² Իմա բոստ յունին. Եւ այսպէս շարժումն՝ որ 'ի նմանէ ('ի մարմնոյ) գոցցես յառաջանալ թուի, ոչ է սկզբնական, այլ հետևորդական շարժումն:

³ Յօրինական մեր փաստաւորելն, վրէպ թարգմանութեամբ θόξαις յունական բառի, որ ունի զնշանակութիւն խորնորոյ, որպէս և փաստաւորելոյ:

յեղանակի և անձն ըստ բնութեան շարժուն և ըստ բնութեան պա-
գարել ոչ կարէ. բանդի դադարումն՝ ապականութիւն անձին է և
ամենայն մշտաշարժի:

Առ այսօրիկ՝ և տարակուսեալն ՚ի սկզբանէ անընդ մնայ՝, ուստի
լինի շարակալեալ մարմին, բնութեամբ բնաւորեալն ցրուիլ: Բուա-
կան են և այսօրիկ յոլովից՝ ցուցանել զանձն ոչ կատարունութիւն
գոյ և ոչ տնչարժ, և ոչ ՚ի մարմին եղեալ:

Իսկ Պիւլթագորաս նշանակաբար նկատել միշտ և՛ զԱստուած և՛
զամենայն ընդ թուովք սովորեալ, սահմանեաց և զանձն՝ թիւ զինքն
շարժող. որում՝ և Քսենոկրատէս² հետեւեաց. ոչ զի թիւ է անձն, այլ
զի ընդ թուեցելովք է և ընդ բազմացելովքն. և եթէ՝ անձն է որ առ-
բորոյէ զիրան՝ կերպս և տիպս իւրաքանչիւր ուրաք՝ ՚ի վերայ արկա-
նելով. քանզի նա է որ պտեւտկս ՚ի տեսակացն որոյն, և զտարբերու-
թիւնս նոցա ցուցանէ, այլոյլութեամբ տեսականն և բազմութեամբք
թուոցն, և վրան այսօրիկ թուելիս արտրեալ զիրան. ուստի ոչ ամե-
նայնիւ ՚ի բաց վճարի՝ ի կցորդութենէ թուոցն. իսկ զինքնաշարժն և
սո՝ (Քսենոկրատ) նմա վկայեաց:

Բայց զի թիւ ոչ է՝ յայտ յայտմանէ է, զի թիւ՝ քանակ է, իսկ
անձն ոչ է քանակ. այլ էութիւն. ոչ ուրեմն է թիւ անձն, թէ և
մանաւանդ զթիւն յիմացական էութիւն գոյ կամեցին, որպէս յո-
րըս վկնի սորին տասնցոյք:

Եւս, անձն շարակալեալ է, բայց թիւ՝ ոչ է շարակալեալ. ոչ ուրեմն
է թիւ անձն: Եւս, թիւ 1 ամ՝ դար է կամ՝ կոճատ, բայց անձն ոչ դար
է, ոչ կոճատ. ոչ ուրեմն թիւ է անձն: Եւս, թիւ ըստ յաւելման
աճէ, իսկ անձն ըստ յաւելման ոչ աճէ: Եւս, անձն ինքնաշարժ է,
իսկ թիւ սահմանեալ անշարժ. Եւս, թիւ մնայլով մի և նոյն բնու-
թեամբ, և ոչ մի որակութիւն՝ որ ընդ թուովն անկանին եղեալ՝
փոփոխել կարէ. բայց անձն մի և նոյն մնայլով ըստ էութեանն՝ փոխէ
զորակութիւնն յանուանումն թիւնէ ՚ի մակացութիւն փոխանակեալ
և ՚ի շարութիւնէ, յատարիներթիւն. ոչ ուրեմն է թիւ անձն:

Արդ՝ հնոցն աւանդութիւնք յաղագս անձին՝ այսօրիկ ՚ի Բայց Եւ-
նովիոս³ տահմ. նեաց զանձն. Էութիւն անմարմին՝ ՚ի մտման ստա-
ցեալ ընդ. նմին զգեցեալ համանդ ամայն զամենայն ինչ: Արդ՝ զէութիւն

¹ Իմն. Տարակուսեալ տէ՛ գայն՝ որ ասաց թէ Ամփն և Կլումն տապին զի ա-
մենայն մարմին բնութեամբ ցնդելի է, թէ ոչ այլ լիցի իր՝ որ շարայնդէ զինքն, և
թէ իցէ ինչ՝ որ պնդող է մարմնականացս, բաւական է այս և այլ յոլով բանքդ զոր
ասացող, ցուցանել՝ զի ոչ է (անձն) մարմնոյ կատարունութիւն ըստ Արիստոտելի,
և ոչ անշարժ և ոչ ՚ի մարմնոյ եղեալ, այլ էութիւն ինքնաշարժ և մշտաշարժ:

² Քսենոկրատ՝ զլաւս ճանաչականացն զպրոցի, որ խնամհար եղև միաբանել ըզ-
վարդապետութիւնս Պրատոնի՝ վարժապետին իւրոյ, ընդ որոց ՚ի Պիթագորայ:

³ Եւնովիոս հերքսիփոտապեան ՚ի չորրորդում դարու, որ ուրացաւ զմարմնաւու-

անմարմին 'ի ճշմարտութենէ էտու՝, բայց 'ի մարմնի ստացեալն յԱրիստոտելին փարզապետ լիժենէ, ոչ ածեալ զմտաւ, որ և սուրն² էր լիժէ 'ի նոյն ժողովել փորձի զանհպելիսն. քանզի ամենայն որ լի ներութիւն մարմնական ունի՝ համոնդամայն և ժամանակական, ապականացաւ է և մահկանացու։ Չայնակից է այսոյիկ և Մովսէս ինքն. քանզի զգալեացս լինելութիւնս գրելով, ոչ 'ի նմին և զիմա, ցականայն ասաց անգէն գայնալ բնութիւն. այլ նկատելով³ ոմանք ասեն զայս, որոց ոչ ամենեքին հետեին։

Իսկ եթէ ոք յորմէ՝ յետ ստեղծանելոյ մարմնոյն՝ արկանիլ զանձն⁴ համարեացի յետ մարմնոյ լինել զնա՝ մեղանչէ ճշմարտութեան. քանզի և ոչ Մովսէս յայնժամ ստացեալ ասէ զնա, յորժամ 'ի մարմինն արկանիւր, և ոչ ըստ բանի՝ այսպէս ունի։ Արդ՝ կամ մահկանացու ասացէ զնա (Էւսեմիոս), որպէս Արիստոտելէս պատգմեալ 'ի մարմնի ծնեալ և որպէս Ստոյիկեանքն, և կամ ասելով էութիւն, անմարմին, հրա՛արեսդէ զասելն 'ի մարմնի ստացեալ, զի մի մահկանացուի անձին մտածութիւն յանդիման կողուցէ մեզ և ամենեկին անբանիք իսկ այլադդ, ըստ նմա՝ չե և ոչ լի աշխարհս, այլ անկատար տակաւին և այժմ, և յաւելուածոյ միշտ կտրուտ։ Հնգիցս բերք մինչև՝ զպալատն ասացից՝ հանապազօր էութիւնք իմացականք ապինին նմա. և որ դժեղակազոյնն է, յորժամ կատարելագործիցի՝ յայնժամ լուծի, ըստ նմա, վերջնոց մարդկան՝ որք մերձ առ յարութիւն՝ զանձնականն լիւր թալաւ։ Եւ զմէջ արդեօք քան զայս լինիցի անբանազոյն. յայնժամ ասել ապականել զաշխարհս՝ յորժամ լցցի. քանզի ամենեկին մահկանց աղայոց է յեղանակս այս և աւագահիմն խրատու, անգէն յետ ընչոյն՝ շփոթիլ եղելոյն։ Քանզի ասելն նախախնամութեան բանիւր լինել այժմ զանձինս և ոչ ստանալոյ. քանզի ոչ նոր էութիւն, և ոչ այլ քան զոր են՝ 'ի ներքս մուծանել, այլ զէն ըստ նախախնամութեան՝ բազմացուցանել, ոչ զիտողաց է զարարեալութիւն ստացուածոյ⁵ և նախախնամութեան. Քանզի նախախնամութեան պործ է 'ի միմեանց ծնողենէ ամբողջ. պահելն զապականացուացս կենդանեաց էութիւն, և ասեմ զոչ ըստ փութիւնն եզելոյն, վրան զի զնոցայն փութանորդութիւն՝ գարձեալ այլ փութութիւն պահէ. իսկ

բութին Բանին. այլ հերքեցաւ 'ի Մեծէն Բարսղէ Կեսարացոյ, 'ի Գրիգորէ Նազիւնզացոյ և 'ի Նիսացոյն։

¹) Յոյն բնագիրն ասէ. δὲ τοῦ Πλάτωνα εἰληφες, այս է. Ի Փլատոնէ կառ։

²) Այս է՝ քիպեա և սրամիտ ոմն էր։

³) Յոյնն εἰσαχόντες, կարծեօք իմն։

⁴) Այսինքն է, իսկ եթէ ոք յայնմանէ՝ զի յետ ստեղծեալ գոյ մարմնոյն՝ հոգին 'ի ներքս զնի, ընծայութիւն յառաջ բերել կամիցի՝ հետևորդ լինելութեան անձին քան զմարմնոյն, հակառակի ճշմարտութեան։

⁵) Ստացեալ, առացառած, ստացումն, իմա ստեղծեալ, ստեղծուած, ստեղծումն։

ստացուածոյ՝ զօրաւոր գործ է՝ յոչէից առնեն, Արդ՝ եթէ 'ի միմեանց ծննդենէ լինին անձինք, նախախնամութեան բանիւ լինին, և ապակահաջութեան, որպէս և այլքն 'ի փոխանորդութենէ եղեալքն, իսկ եթէ յոչէից յառաջ գան՝ ստացուած է եղեալն, և ոչ է ճշմարիտ Մովսէս ինքն՝ (յա. ելն). Հանգեաւ Աստուած յամենայն գործոց իւրոց, Ահաեղբ եւ երկորին. ոչ ուրեմն այժմ լինին անձինք. քանզի Հայր իմ մինչև ցայժմ գործէն՝ ոչ զստանալոյն, այլ զնախախնամելոյն ասել կամ՝ եղև նմա (Եւհովեայ):

Իսկ Ապողինարի թուեցաւ ասել՝ զանձինս յանձանց ծնանել. որպէս 'ի մարմնոյ զմարմինս. քանզի յառաջ գալ անձին ըստ փոխա-նորդութեան առաջնոյ մարդոյն. յորս 'ի նմանէն յամենեան՝ որպէս զմարմնական փոխանորդութիւն. քանզի ոչ համարեալ կալ զան-ձինս, և ոչ այժմ՝ ստանալ¹. զի (ըստ Ապողինարի) որք զայսն ասեն՝ գործակից առնեն զԱստուած շնացողաց, զի և 'ի սոցանէն մանկուհս ծնանին. սուտ գոլ և զՀանգեալն Աստուած յամենայն գործոց իւրոց՝ զոր սկսուա առնել, եթէ տակաւին և այժմ անձինս արարչագործէ: Այլ թէ ամենայն որք ըստ փոխանորդութեան 'ի միմեանց ծնեալք են՝ յու-յանին մահկանայութեան. քանզի վասն այնորիկ և ծնանին և ծնեալ լինին՝ զի մահկանայութեան անկեացէ ազգ. Հարկ է գոլ և սմա (Ապողի-նարի) մահկանայութեան զանձն՝ 'ի միմեանց ծննդենէ զեղեալն և կամ ոչ 'ի փոխանորդութենէ միմեանց ծնանիլ անձանց. քանզի 'ի շնութե-նէ զձնեալսն՝ նախախնամութեան բանի թողցոյ՝ անգիտելոյ առ 'ի մէնջ. իսկ թէ պարտ ինչ է և նախախնամութեան 'ի վերայ հայել՝ ամենայն իրօք յայժմ և 'ի շնութիւն ծնեալն՝ կենցաղոյս և կամ ին-քեան պիտանի եղեալ. և վասն այնորիկ՝ տայ թոյլ անձնաւորութեան լինել, և բաւական օրինակ առնուիք այսորիկ՝ 'ի կնոջէն Ուրիոյ և 'ի Դաւթէ զԺնեալն Սաղոմոն:

Զկնի սորին տեսցաւ և զկարծիս Մանրեցեացն՝ զոր ունին յաղազս անձին. քանզի տեսն զնա անմահ և անմարմին, բայց մի միայն գոլ տեսն զամենեւոց զանձն, կոտորոտեալ և տրամատեալ յիւ-րաքանչիւրսն մարմինսն, յանշունչս և շնաւորս. զոմանս առաւելագունի հաղորդ լինել և զոմանս փոքու. առաւելագունի՝ շնաւո-րացն, իսկ փոքու՝ անշնչիցն. իսկ ևս առաւելագունի՝ երկնաւորացն. որպէս զի բոլորին անձին՝ մասունս լինել զիւրաքանչիւրոցն անձինս:

Եւ եթէ անրաժանաբար բաժանեալ ասէին զայս՝ որպէս ձայն 'ի լսողս, չափաւոր արգեզք էր չարն. բայց այժմ զնոյն էութիւն ան-ձին՝ բաժանիլ ասեն, որ և քան զամենայն չարագոյն է, զի տիրապէս 'ի տարերս գոլ զնա կամին, և բաժանակից լինել նոցա 'ի մարմնոյ եղելութեանց, և դարձեալ 'ի նոյն դառնալ 'ի լուծանել մարմնոյ, որպէս զլուր բաժանեալ և դարձեալ ժողովեալ և խառնեալ. և զմա-

¹ Աս է՝ որպէս ասացաք 'ի վերոյ տողմակի:

քորսն անձինս տարեալ լինել 'ի լոյս՝ լոյս գոլով, իսկ զշաղախեալսն 'ի նիւթոյս՝ տարեալ լինել 'ի տարեւոյ, և դարձեալ 'ի տարեւոյ՝ 'ի տունէս և 'ի կենդանիս: Եւ այսպէս զէութիւն նորա (անձին) տրամառեալ, մարմնական ցուցեալ, և ընդ ակտիք արկեալ՝ անմահ գոլ տանն, և անկանիլն՝ 'ի հակառականս փանգի տանլովն՝ զառնալ շաղախեցելոյն անձանց՝ 'ի տարեւոյ, և խառնել ընդ միմեանս. դարձեալ զնոսա՝ 'ի մարմնաւ փոխութիւնս տանն պատժիլ՝ ըստ ծանրութեան մեղացն, միասորեալ զնոսա և դարձեալ որոշեալ ըստ անձնաւորութեանս: Քանզի զստուեւորա 'ի լուսոյ որոշել, իսկ 'ի լինել ամպոյ՝ միասորիլ, որ անկար է 'ի վերայ իմացականի բնութեան լինել. քանզի ստուերը զգալեաց են, թէ և տացէ որ նոցա որոշել, և դարձեալ միասորիլ:

Պատահն և մի քոլ ասէ զանձն և բազումս. մի քոլ՝ զամենեցունց զանձն, գոլ և բազում՝ զորս ըստ մասին, որպէս զի անձնաւորիլ ամենայնի՝ 'ի յամենեցուն յանձնէն, և իւր դարձեալ՝ որք ըստ մասին՝ իւրաքանչիւր յիւրմէ անձնէն. և ասէ զամենայնին անձն՝ յարձակիլ 'ի բեռեւէ երկնից մինչև 'ի ծագս երկրի, ոչ տեղորար յարձակիլ նմա տակով, այլ իմացականապէս, և զայս անձն քոլ՝ քոլով շարժ ընդ ամենայն գնդաձևապէս, շարունակելով և շարապնդելով զմարմնաւ տեսականութիւն աշխարհիս: Քանզի կարօտ քոլ մարմնոյ շարակալութի՝ և յառաջագոյն ցուցալք, և առնէ զայս՝ տեսականարարն անձն: Քանզի կեան իւրաքանչիւր սմեք էիցն զիւրն կեանս, և ապականիլ զիւր ապականութիւն, քանզի ցորքան շարակալի և շարապնդի՝ մարմին գոլ տաի, իսկ 'ի բաց լուծեալ՝ ապականել. և կեանք ամենայնի, բայց ոչ քոլ ամենայնի՝ ենդանիս. քանզի տարորայնի յանչիցն տունիք՝ առմամբ և անդեւամբ, ոյսինքն՝ անդականաւ և անկականաւ զօրութեամբ. իսկ անբաւ կենդանիք 'ի անկոցն՝ զգայութեամբն. իսկ բաւնականքն յանբանիք՝ բանականութեամբն. և այսպէս զամենայն կեալ տանելով տարորոշեն զիւրաքանչիւրն բնութիւն: Եւ կեալ տանն և զամենեկն անչառնչան՝ ունական կենդանութիւն, ըստ որում՝ շարակալեալ լինի յամենեցունց անձնէ՝ 'ի գոլն միայն՝ և ոչ լուծանել և յորիկ անձին՝ գոլ զեկալարիչ ամենայնի և մասնականաց անձանց, յառաջագոյն յարարչագործէն եղելոյն, առարեալ՝ յայտ է՝ նորին արարչագործին, և օրէնս տուեալ սմա՝ ըստ որում՝ մարիլն պարտ է, այսմ՝ ամենայնի՝ զորս և Բայտ և ճակատապիւր կոչեն. և բաշխեալ զօրութիւն բաւականս. տա 'ի խօսիլ՝ մեզ. տաի այս և յորում յաղաքալ ճակատապիւրին:

Արդ՝ հասարակաց ամենեքին Բունաց իմաստաւորքն, որք անմահ ասացին զանձն՝ զմարմնափոխութիւն օրինադրեն. բայց տարբերին 'ի տեսական անձանց. քանզի ամանք միատեսակ ասացին՝ զբանականն,

¹⁾ Իմա քոլն միատրեալ 'ի մի:

²⁾ Որինակ մի՝ առ 'ի բայսեղ մեզ. յոյնն՝ առ 'ի վարել զմեզ:

զնոյն և 'ի տունկան և յանասնոցն մարմինս անցանել իսկ ոմանք՝
 ըստ ժամանակաց ինչ իրիք շրջադայութեան (յանասնոցն մարմինս
 անցանել առայցին) իսկ այլք՝ որպէս և դէպ եղև. այլք դարձնաւ ոչ
 միտտեսակ անձանց՝ այլ երկուս, բանական և անբանս իսկ ոմանք
 բաշտման, այնքան՝ որքան ինչ կենդանեացն են տեսալք, մանաւանդ
 որք 'ի Պղատունէն՝ այսու օրինադրութեամբք բերեալք եկին. քանզի
 ասացեալ Պղատունի՝ սրամտողացն և բարկացողաց և յափշտակողաց
 անձանց՝ գայլոց և առիւծուց մարմնովք զարդարեալք, իսկ որք 'ի
 վաւաշտութիւն են հաստատեալք՝ զիշոյն հ զմանեացն առնուլ
 մարմինս. ոմանք տիրապէս լուան զգայլսն և զառիւծանս և զէշս,
 իսկ ամանք յեղանակուել ինչ առել նմա զայս գիտայցին՝ զբարոյսն նոցա
 տեսնոցն նմանեցուցեալ:

Իսկինս՝ յորում Յազաքս վերստին լինելութեան² (այսպէս կոչէ
 զմարմնափոխութիւնս) բանականս զոլ զամենեւին ասէ: Նոյնպէս
 և թէնգործս պղտունական՝ յորում թէ Ամենայն տեսակ է անձն³,
 Էւ Պորփիրոս⁴ նմանապէս: Բայց Բամիլիքոս⁵ հակառակ սոցա ընթա-
 նալով՝ ըստ տեսակի կենդանեաց՝ անձին տեսակ զոլ ասէ. այսինքն տե-
 րակրաարքեայ: Էւ է գրեալ նորա դիրս մի, եթէ ոչ 'ի մարդկանէ յան-
 բան կենդանիս, և ոչ յանբանից կենդանեաց 'ի մարդիկ լինին մար-
 մնափոխութիւնք, բայց յանասնոց յանասունս և 'ի մարդկանէ 'ի
 մարդիկ: Էւ որպէս ինձ թուի՝ սա ս այսորիկ սա յաւէտ բարիք
 հանգիպեցաւ՝ ոչ միայն Պղատունի կամայն, այլ և նորին ճշմարտու-
 թեան, որպէս է՝ որ և յայլոց բազմաց ցուցանել մանաւանդ յայտ-
 մանէ՝ քանզի և ոչ մի 'ի բանականացն շարժութեանց երևի յան-
 բան կենդանիսն, զի ոչ արուեստ և ոչ սամունք և ոչ խորհուրդք և
 ոչ առաքինութիւնք և ոչ այլ ինչ յիմացողականացն է 'ի նոստ. յու-
 րոց յոյս է թէ ոչ փոխեցաւ 'ի բանականէն անձնէն 'ի նոստ. զի և ան-
 տեղի է իսկ ասել զանբանսն 'ի բանականսն փոխորկիլ: Քանզի թէ հ
 յոյժ մատաղն դոլ տղայոցն՝ անբան միայն շարժութիւն տունէ նոցա,

¹) Այս են՝ Պղատունեանք:

²) Կռնիոս իմաստասէր երկրորդի դարուն, յիշատակի գովութեամբ և 'ի Պոր-
 փիրէ և Նեսքերոց: Յիշատակեալն մատենս կոչի Կո Յայն Metamorphosis
 (Palingónesis):

³) Այսինքն 'ի մատենին իւրում, յորում ասէ զամենայն տեսակ անձն լինել:

⁴) Պորփիրոս՝ աշակերտ և գրող վարաց Պղատունի, մաքառեցաւ ընդդէմ քրիստո-
 նէութեան, թէպէտ և ասանգի 'ի վերջոյ աբեմն ընկալեալ զկրօնսն ճշմար-
 ութեան:

Մեռաւ յսմին երեքհարիւր և չորս:

⁵) Բամիլիքոս (Iamblichus) աշակերտ Պորփիրոսի, 'ի չորրորդում դարու, որ ընդ
 իմաստասիրութեան և զմոգութեան կամ զգիթութեանց վարէր զոր՝ յորմէ և
 Աստուածային ընկալաւ կոչումն՝ իբրև հրաշք արարող ստեղծարանեալ. այր վաճ և
 մեծ մտերմութիւն և յարգանս ցուցանէր նմա Ուրացողն Յուլիանոս:

այլ անձն բանական տեսմբ ունել նոցա, վասն զի և յաճեին զբա-
նականն յուզանեն ներգործութիւնս. իսկ անբանն՝ և ոչ ըստ միոյ
հասակի ցոյցանելով զբանականն, աւելորդ արգեօք ունէր զբանական
անձն, ոչ ամենին զհանգերձեալն՝ լինել բանականին զօրութեան.
քանզի ոչ աւելորդ ինչ առ ՚ի յԱստուծոյ լինել՝ խոստովանեալ
լինի համաձայնապէս առ ՚ի յամենեցունց. և եթէ այս, աւելորդ
էր բանականն արկանել անձն յանասունն և ՚ի գաղանն, որ ոչ
էր երբեք կարօղ յուզանել զիւր գործն. և էր արգեօք մեղադրել
սուղորին՝ անպատշաճ անձն մարմնոյն. քանզի և ոչ արուեստաւորի
իսկ գործ է, և ոչ կարգ և յօդաւմն գիտողի:

Իսկ եթէ որ ապիցէ՝ չարժիլ ըստ տրամադրութեան բանականապէս՝
կենդանեացն, բայց ստեղծուածն նոցա անընդունակ դուրս տրուեալ
կանին գործոյ. հաւատարմացուցանելով զբանն ՚ի մարդկանէ՝ փանզի
՚ի բաց բարձեցելոյն միայն մատանց ձեռացն՝ բազում արուեստս կու-
րուտանէ, ոչ լուծանէ զինդրելին: քանզի մնայ տակաւին նոյն անտե-
ղի՝ որպէս ոչ Աստուծոյ պատշաճ անձն յօդեալ մարմնոյ, այլ աւե-
լորդ և անօգուտ և անդործ, խափանեալ ՚ի ձեռն ամենայն հասակի
իւրեանց ՚ի յիւր ներգործութեանցն: Իսկ և առ զբանն նոցա կազմե-
լոյն ՚ի յանյայտից և ոչ ՚ի խոստովանելոց, ուստի է ըստ արամագրու-
թեան բանականապէս չարժիլ կենդանեացն:

Լաւ համարելի է պատշաճ իւրաքանչիւր մարմնոյն անձն յօդիւմ
ոչ ինչ առաւել ունել ըստ տրամադրութեան կենդանեացն՝, և երևցելոյն
նոցա գործոյ՝ ըստ արականին պարզութեան. քանզի իւրաքանչիւր տե-
սակ անանոցն ըստ իւրում՝ յարձակմանն չարժի, առ որ պէտս և ներ-
գործութիւն եղև ՚ի սկզբանէ, և առ պայտքիկ և զատեղծուածն պատշաճ
ունին: Սակայն ոչ առանց օղնականութեան զամենայն ամենին
զնոսա թողեալ արտադրութիւն, այլ իւրաքանչիւր ումիք՝ բնաւորական
և ոչ բանական տնկեաց հանճար. յոմանս և խորամանկութիւնս եղ,
որպէս պատկեր արուեստի և ստուերս բանական արուեստ նոցա՝ յառըն-
թիւր գուռածանութեանց խոյս տալ, և յապտունեացն պահել զին-
քեանս, և հպեցուցանել զարարածս ամենայն յինքեանս, որպէս և
ասացաւ իսկ¹⁾:

Իսկ վասն զի ոչ բուականապէս առնէ զայս, յայտ է՝ յորմէ իւրա-
քանչիւր տեսակ կենդանոյն նմանապէս գնոյն առնէ, ոչ փոփոխեալ
՚ի բազմութեան գներգործութիւնն, բայց միայն ըստ առուելու-
թեան և նուազութեան, սակայն ըստ միոյ արձակմանն չարժի բո-
լորն տեսակ. զի ամենայն նապաստակ նմանապէս հնարիմաց է, և
ամենայն գայլ նմանապէս խորամանկ է, և ամենայն կապիկ նմա-
նապէս առնէ զոր ինչ տեսանէ. որ ՚ի վերայ մարդոյ՝ ոչ է այս, քանզի

¹⁾ Թմն. Հպեցոյց զարարածս յիւրա-որպէս և ասաց թէ զքարինսն ՚ի խնցեկող-
սն, և զնոսա ՚ի շնչուոր, և զնոսա ՚ի մարդիկն, և զնոսա ՚ի հրեշտական:

բիւր ճանապարհք են գործոց մարդկան, զի աղատ իմն և անձնիչ, խոսն է բանականն. աւտի և ոչ մի և նոյն գործ է ամենայն մարդկան, որպէս իւրաքանչիւր տեսակի տնտեսիցն կենդանեաց. քանզի բնութեամբ միայն սորա շարժին, և բնութեամբն նմանապէս առ ամենեւեան. իսկ բանականն գործք՝ այլք առ այլս, և ոչ ի հարկէ են նոյնք առ ամենեւեան:

Իսկ եթէ տարիցեն թէ ՚ի պատիժ յառաջագոյն մեղուցելոյ անձին ՚ի մարդկայնութեան կենցաղի՝ յայնպիսի մարմինս առաքել, (է) ՚ի վերջնոյն տառնել զցուցումն¹, վասն էր յառաջագոյնս եղեալս մարմինս անբունիցն՝ արկեալ եղեն բանական անձինք. քանզի ոչ ուրիշ որպէս ՚ի մարմինս մարդկայինս մեղուցեալք՝ նախ քան զլինելն մարմին մարդկային:

Նմանեաց այսուիկ կարծեք² գնել և Գողթնոս՝ շքունչկին բժիշկ. և իւրաքանչիւր տեսակի կենդանոյ տարբերութեան գոյ առել և անձին տեսակ. քանզի ասէ անդէն յիսկզբան առաջնայն գրոցն՝ որ Յաղագս պիտոյից մասնիկանց իրողութեան՝ այսպէս. Էւ յայս բազում եղիցին կենդանեացն մասնկալն, է ինչ՝ որ մեծամեծք, և է ինչ՝ որ փոքունք, բայց ամենայն յամենայնի յայլս տեսակ անհատք³, և պէտք են սուցա ամենայնի՝ անձին: Քանզի մարմին գործարան է անձին, և վասն այսորիկ բազում տարբերին ՚ի միմեանց մասնկունք կենդանեացն, վասն զի և անձինք (տարբերին): Գարձեալ յառաջ երթալով ՚ի նոյն գիրս՝ յաւելու ՚ի վերայ կապի և զայս. Որ և, ով իմաստունդ ստորոգիլ, ասիցէր արդեօք բնութիւն ցրեղ, ծիծաղելոյ անձին կենդանոյ՝ ծիծաղելի պիտոյ է տալ և զմարմնոյն կազմութիւն: Այսպէս գիտել պէտպէս մարմնոյ՝ ըստ տեսակին պէպէս ՚ի ներքս գոյ անձինս: Եւ այսքան յաղատս այսոցիկ:

Իսկ եթէ ցուցաք զանձն ոչ մարմին գոյ, և ոչ յօգումն և խառնուած, և ոչ այլ ինչ որակութիւն, յայտ է յայցոցանէ թէ էութիւն անմարմին է անձն, և զի է խոստովանելի ամենեցունց: Իսկ եթէ ոչ մարմին է և ոչ պատահումն, յայտ է թէ անմարմին էութիւն է, և ոչ ինչ

¹ Այն է յոռի շրջանու առնել է զցուցումն:

² Այս է՝ կարծեքն ճմարտութեան, զոր մեքս ունինք:

³ Այսպէս յունարանութեամբ մթին՝ յամենայն օրինակս մեր: Գոյնն ունի. Καί ἐστὶ τοῦτο, πολλὰ τῶν ζώων ἐστὶ μορία, τὰ μὲν μείζων, τὰ δὲ ἐλάττω, τὰ δὲ παντάπασιν εἰς ἕτερον εἶδος ἄμνητα· χρεία δὲ πάντων αὐτῶν ἐστὶ τῇ ψυχῇ. այսինքն է. Այսով այսպէս գոյով գտնազան եղիցին կենդանեաց անդամք, ոմանք մեծագոյնք և այլ փոքունք. իսկ մէն միւս մեծեցուն՝ տեսակ անհատական. և հոգի պէտս ունի այսոցիկ ամենեցուն: - իմն. Էւ գտանն՝ որ բոլոր կենդանիքս անմասն են միմեանց՝ մեծութեամբ և փոքրութեամբ. բայց ամենայն յամենեւին կայ միապէս, յայլ և այլ տեսակ, որ է անհատքն. այն զոր Արիստոտէլ ենթակայ և նրւթ կոչէ. զի այն յամենայն միապէս կայ, իսկ մասնկունք տեսակին՝ այլ և այլ:

յայլում ունողացն զգոլն . քանզի պստքիկ և լինին և բացալինին
առանց ենթակային ապականութեան . բայց անձին 'ի բաց որոշեցելոյ
մարմինն ամենայն իրօք ապականի :

Դարձեալ նոքումք վարելով՝ է ցուցանել զանձն անմահ գոլ .
քանզի թէ ոչ մարմին՝ որ և բնութեամբ լուծանող ցուցաւ և ապա,
կանացու , և ոչ որակութիւն և ոչ որակ և ոչ քանակ և ոչ այլ ինչ
յապականացուացս , յայտ է թէ անմահ է : Արդ՝ բազում են անմահ
հոլթեան նորա ցուցմունք առ 'ի Պղատունէ և յայլոց , այլ այնք
պատկապառք և գծուարիմայք և հազիւ գիտելիք նոցա՝ որ յայնսն
են անեալք մակացութիւնսն : Բայց մեզ բաւական է առ 'ի ցուցումն
անմահութեան նորա՝ աստուածայնոց ասացելոյ վարդապետութիւնք՝
հաւատարմութիւն յինքենէ ունելով՝ վասն աստուածաշունչ գոլոյն ,
իսկ որք ոչն ընդունին զգիրս քրիստոնէից , բաւական է նոցա ցու
ցանելն զոչինչ գոլն նմա (անձին) յապականացուացս . քանզի թէ ոչ
ինչ է յապականացուացս՝ անապական է և անմահ . և զայս բաւա
կան համարեալ թողցուք :

Ի ՎԱՐԴՆ ԵՐԳ ՍԻՐՈՂԻ

Սիրտ իմ անդադար եղև սիրահար ,
Առնէ գիս աւար . շըրջիմ խնլագար . վարդ , վարդ , վարդ :
Իմ սիրական վարդ , արա ինձ զըւարթ
Տեսոյդ եմ աղբատ , իմ աննըման վարդ . վարդ , վարդ , վարդ :
Բամ ցաւած խոցով՝ աղաչեմ սիրով ,
Լէր ինձ ապահով , իմ բերկրական վարդ . վարդ , վարդ , վարդ :
Երեսըդ պայծառ , ծով ալքերըդ վառ ,
Ունքերըդ կամար , մուրէ ինձ վարդ . վարդ , վարդ , վարդ :
Լալով աղաչեմ , սիրով պաղատեմ ,
Ցաւերըս ասեմ , մին ճար արա վարդ . վարդ , վարդ , վարդ :
Ի սիրոյ քոյ եմ սիրով բողբեմ
Գեղ մեռանիմ արդ , արա ինձ զըւարթ , վարդ , վարդ , վարդ :

ՆՈՐ ՔՆԱՐ